Ռ. Մարտիրոսեան պատրաստակամութիւն յայտնած է կարելիին չափ աջակցել Արցախի Պետական համալսարանին մէջ կրթական գործընթացի արդիւնաւէտութեան բարձրացման գործին մէջ:

www.hamazkayin.com

Միջազգային Բաղաքական Կեանք

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ - ԹՈՒՐԳԻԱ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՊԱՂ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՒԱՐՏԻՆ


ԲԱխարհամարտն ետք Միացեալ Նահանգներու արտաքին եւ միջազգային քաղաքականութեան ամրապնդման մէջ կարեւոր դեր ունեցան տնտեսական եւ ռազմական օժանդակութիւնները: Եւ թուրքիա առատօրէն վարձատրուեցաւ իբրեւ Միացեալ Նահանգներու աշխարհագրական պաշտպանութեան ծիրէն ներս վստահելի դաշնակից (ցուցակ 3): Պաղ Պատերազմի տարիներու ընթացքին թուրքիա Միացեալ Նահանգներու տնտեսական, բայց մանաւանդ ռազմական օժանդակութեան բարձրագոյն գումարը ստացողներու ցանկին կը պատկանէր: Պաղ Պատերազմէն ետք իսկ թուրքիա շարունակեց ստանալ միլիոններ արժող ռազմա-

տերը: 1990ին թուրքիայէն 202 «ուսանողներ» մասնակցեցան IMETի դասընթացներուն, 1995ին՝ 109, եւ 2000ին՝ 204: Նոյնպէս 2000ին թուրքիայէն 313 «ուսանողներ» մասնակցեցան FMSին: Մ. Նահանգներու պաշտպանութեան իշխանութիւնը 2000 տարուան ընթացքին տրամադրած էր 9,65 միլիոն տոլար՝ թրքական բանակի զորացման վերաբերեալ այս ծրագիրներուն: Մ. Նահանգներու պաշտպանութեան եւ արտաքին գործոց իշխանութիւններուն կողմէ Մարտ 2000ին հրատարակուած տեղեկագիրին մէջ զոյգ իշխանութիւնները բարձր գնահատանքով կ'արժեւորեն թուրքիոյ ռազմական կեցողութեան Պաղ Պատերազմի ընթացքին, շեշտելով, որ այդ դաշնակիցին ռազմական դերը այժմ ա'լ աւելի կարեւորութիւն ստացած է Միջին Արեւելքի եւ Կովկասի տարածքին ՕԹԱՆԻ եւ Միացեալ Նահանգներու աշխարհաքաղաքական շահերուն համար:

Իր կարգին, թուրք կառավարութիւնը, Մ. Նահանգներուն մէջ իր շահերը պաշտպանելու եւ անոնց զարկ տալու համար, տարիներու ընթացքին վարձեց ճանաչի յարաբերութեանց տարբեր հաստատութիւններ: Ըստ Մ. Նահանգներու արդարադատութեան իշխանութեանց, 1997-2000 թուականներուն, այս ընկերութիւններու շարքին էին օրինակ՝ Abernathy/Mac Gregor, APCO Worldwide, C/R International, Capotoline/MS&L Groups եւ բազմաթիւ ուրիշներ: Ներկայացնելով թրքական գանազան նախարարութիւններ՝ այս հաստատութիւններու աշխատանքները կ'ընդգրկեն օրինական խորհրդատուութիւն եւ մանաւանդ Մ. Նահանգներու պետական օրէնսդիր եւ գործադիր իշխանութիւններու, ինչպէս նաեւ ընդհանուր ժողովուրդին թուրքիոյ հանդէպ դրական կարծիքի մշակում: 1990ի առաջին կէսին, Capotoline/MS&L ստացաւ 3,255,000 տոլար՝ ներկայացնելու թուրքիոյ շահերը Մ. Նահանգներու Բոնիկ-Րէսին մէջ: Նոյն տարուան երկրորդ կէսին Fleishman - Hillard եւ Patton Boggs իւրաքանչիւրը ստացաւ աւելի քան 960,000 տոլար՝ զարգացնելու Մ. Նահանգներ - Թուրքիա յարաբերութիւնները քաղաքական, առևտրական եւ ռազմական մարզերուն մէջ: 1998ի առաջին կէսին, թուրքիոյ խորհրդարանի ղեկավարութեան այցելութեան առիթով, հանրային յարաբերութեանց «Նոֆֆմայն» ընկերութիւնը ստացաւ 70,000 տոլար, իսկ Patton Boggs՝ 505,000 տոլար թուրքիոյ վերաբերելու տնտեսական, քարիւղի գիծերուն եւ ռազմական դիրքի կարեւորութեան մասին հրատարակութիւններ պատրաստելու եւ տարածելու համար ամերիկեան մամուլին մէջ: Նոյն տարուան երկրորդ կէսին DCS Group եւ Patton Boggs ստանձնեցին նախապատրաստական աշխատանքները Մուսթաֆա Ֆեմալի կեանքին նուիրուած ժապաւէնին արտադրութեան: Վերջինը ստացաւ մէկ միլիոն տոլար ասոր եւ Ուաշինկթընի մէջ լուսինիկի աշխատանքներուն համար: Ցուցակ 3ը կը ներկայացնէ 2000ի, Միացեալ Նահանգներու ընտրութիւններու շրջանին, թուրք պետութեան ծախսած գումարները:

Այս լայնածաւալ յարաբերութիւններով հանդերձ, վերջին «Turkish Daily News» թերթը յղուածով մը իր գանգատը արձանագրեց՝ շեշտելով, թէ թրքական գաղութը Միացեալ Նահանգներուն մէջ կը գտնուի ընդհանրապէս թուրք վիճակի մէջ, եւ թէ անպակաս միջոցներու հարկ է դիմել՝ կազմակերպելու եւ զորացը-

ԱՐԴԵՕՔ «ՊՈՒՆՏՈՉԸՐ»Ը ԻՍԿԱՊԵՍ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՄԱՐԴ Է



«Պուլտոզը» ծածկանունը կրող Իսրայէլի վարչապետը գիտաշարական - քաղաքական դէմք մըն է, որ իր պաշտօնավարութեան շրջանին բազմիցս ամբաստանուած է պատերազմական ոճիւրներ գործած ըլլալու լայն ցանցով:

Սակայն, ինչ տեսակ մարդ է արտաքին գործոց նախարար Բոլիւն ֆաուլը, որ կը փորձէ հաշտեցնել Իսրայէլացիներն ու պաղեստինցիները:

«Նոյնիսկ եթէ յաջողիք փաստել, թէ Լիբանանի ներկայի պատերազմը աղտոտ եւ անբարոյ պատերազմ մըն է, հոգս չէ: Նոյնիսկ եթէ մէկ տարի ետք Գալիլիան դարձնալ «Բա քի ու շա» ներսի մտաբանութեան, իսկապէս հոգս չէ: Մենք նոր պատերազմ կը սկսինք, կը սպաննենք, աւելին կը փճացնենք, մինչեւ որ անոնք խօսք հասկնան»: «Թող դողան, թող մեզի խելագար պետութիւն կոչեն: Թող հասկնան, որ մենք վարչի պետութիւն մըն ենք, վտանգաւոր մեր շրջապատին համար, բնական չենք, կրնանք խենթանալ, եթէ մեր գաւազաններուն մէջ կը, միայն մէկը սպաննենք: Եթէ ոեւէ մէկը ձեռք բարձրացընէ մեր վրայ, մենք կը յափշտակենք անոր կէս հողը եւ միւս կէսն ալ կ'այրենք, ներառեալ այնտեղի քարիւղը: Մենք կրնանք կորիզային գէնք գործածել»:

74 տարեկան Շարոն կրնայ ըլլալ Իսրայէլացի վերջին ղեկավարը, որ կուտած է «Հակաճառ» շարքերուն մէջ: «Հակաճառ» քաղաքավարութեան շարքին «Երեւոյտական» կազմակերպութեան մէկ մասնիկն է, որ մեծ դեր ունեցաւ Իսրայէլեան պետութեան հիմնումին մէջ, 1948ին:

1950ականներուն Շարոն արիւնարբուի հռչակ ստացաւ, երբ հակաարձակման անցաւ յորդանանեան կարգ մը գիւղերուն վրայ, ուր ապաստանուած էին պաղեստինցիներ, որոնք սահմանին վրայէն յարձակումներ կը գործէին Իսրայէլի վրայ: 1967ի պատերազմէն ետք, երբ Իսրայէլ գրաւեց Այսորդանան ու Կազան, Շարոն հալածեց հրոսակախումները եւ կործանեց հարիւրաւոր պաղեստինեան տունները:

1982ին, երբ Իսրայէլ ներխուժեց Լիբանան, Շարոն անուղղակիօրէն պատասխանատու նկատուեցաւ քրիստոնէական ստիսիի վրայ իր դաշնակիցներուն նկատմամբ գործադրուած թեմա շղթայագրած իրենց պայքարին ընթացքին:

Սակայն յաճախ կը մոռցուի այն իրողութիւնը, որ «Հակաճառ» եւ իր ճիւղաւորումները «Ըրկուց Ջիվ Լիուվի» եւ «Սթըրն Կեցի», ժամանակին ահաբեկչական կազմակերպութիւններ էին, որոնք կը ուժանշանային արաբական հանրահաւաքներու կանգնուելու, կը յարձակէին արաբական գիւղերու վրայ, ինչպէս նաեւ բրիտանացիներ կը սպաննէին Պաղեստինի վրայ բրիտանական զբոյժի իսրայէլական զորքերուն նկատմամբ շղթայագրած իրենց պայքարին ընթացքին:

Շեքնք, որ Իսրայէլի նախկին վարչապետներէն երկուքը՝ Մենախեմ Դեբիւրե Կազան Եմար, «Ըրկուց»-ի եւ «Սթըրն Կեցի» ղեկավարներն էին: Վերոնշեալ խումբերուն հետ կը վարէին «Բիլի Տէյ-վիտ» պանդուկ ուժանշաններուն մէջ Տէյր Եասիին 250 արաբ գիւղացիներուն ջարդը:

«Նոյնիսկ այսօր ես պատրաստ եմ կամաւորաբար աղտոտ գործեր ընել Իսրայէլի համար սպաննել արաբներ՝ ըստ անհրաժեշտութեան, տեղի վրայ մը եւ անտեղի վրայ, եւ ողջակիցելու այնպէս ընել, որ բոլորը ստանան մեզ... եւ հոգս չէ, եթէ գործին աւարտին Նիւրեմպէրկի ատեանին առջեւ դնեն դիս եւ յետոյ ցմահ բանտարկութիւն ստանան: Կախեցէք զիս, եթէ կ'ուզէք, իբրեւ պատերազմի ոճրագործ»:

«Հակաճառ», որուն Շարոն անդամակցած է 14 տարեկանին, Իսրայէլեան պետութեան բանակին կորիզը կազմեց հետագային եւ Իսրայէլի Պաշտպանութեան Ուժը, ինչպէս կը կոչուի այսօր, աշխարհի չորրորդ հզօրագոյն բանակն է ներկայիս:

«Հետեւաբար, կրնանք ապահովաբար ըսել, որ Իսրայէլի անցեալի հայրենասէրները տարբեր չէին այսօր ահաբեկիչ համարողուող պաղեստինցիներէն:

«Դուք չէք հասկնար, որ սիրականութեան աղտոտ գործը տակաւին վերջ չէ գտած»: վերջը հետո է տակաւին»:

ՑՈՒՑԱԿ 3

Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ՌԱԶՄԱԿԱՆ ՕՏԱՆԳԱՎՈՒԹԻՒՆԸ ԹՈՒՐԳԻԱՅ 1960-1999 (ՄԻԼԻՈՆ ՏՈԼԱՐ)

ՏԱՐԻ	ՏՆՏԵՍԱԿԱՆ ՕՏԱՆ.	ՈՒՐԱՅ. ՕՏԱՆԳ.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ
1960	119,0	100,5	219,5
1965	202,5	118,4	320,9
1970	90,2	123,7	213,9
1975	30,6	109,1	139,7
1980	198,7	208,3	407,0
1985	190,9	703,6	894,5
1990	14,7	501,2	515,9
1991	250,4	553,7	804,1
1992	13,3	503,6	516,9
1993	200,4	453,1	653,3
1994	0,4	406,0	406,4
1995	171,2	329,2	500,4
1996	33,9	321,1	355,0
1997	22,8	176,5	199,3
1998	33,4	0	33,4
1999	3,8	1,5	5,3

Աղբիւր՝ USAID

կան օժանդակութիւն: Թէեւ ըստ ցուցակ 3ի տուեալներուն, 1990ական թուականներու կէսին Միացեալ Նահանգներու օժանդակութիւնը նուազած էր, նոյն ցուցակի տուեալներով կարելի է նաեւ նեթօրդերի, որ այդ գումարները դարձնալ կրնան բարձրանալ, ինչպէս պատահեցաւ 1990էն 1991, 1992էն 1993, 1993էն 1995: Պէտք է աւելցնել նաեւ, որ ըստ կարգ մը մասնագէտներու, Մ. Նահանգներու արտաքին օժանդակութեան քաղաքականութիւնը, ինչ որ վերջին տարիներուն, մանաւանդ Պաղ Պատերազմի աւարտին պատճառով, նուազագոյն ժողովուրդականութիւն կը վայելէր, աստիճանաբար կորսնցուցած էր իր անցեալի կարեւորութիւնը՝ փոխարինուելով միջազգային շուկայի եւ ազգային պետական արդիական գործելակերպի, քանակի եւ որակի վերաբերեալ աւելի բարդ կառոյցով տնտեսական, երեւմտական, ճարտարարտեսական եւ ռազմական համակարգներով: Միայն պիտի ըլլար օժանդակութեան գումարներու երեւելի չիման վրայ եզրակացնել, որ Մ. Նահանգներ - Թուրքիա յարաբերութիւնները հասած են ընկրկման շրջան:

Նախ իբրեւ առևտրական յարաբերութիւններու դաշնակից եւ ապա իբրեւ ՕԹԱՆԻ անդամ, Թուրքիա կը շարունակէ վայելել կարեւոր դիրք՝ Միացեալ Նահանգներու արտաքին տնտեսական քաղաքականութեան մէջ, իբրեւ ամերիկեան գէնքերու մեծաքանակ ներածող յաճախորդներէն մէկը: Օրինակ, 1990-1995 շրջանին, երբ Միացեալ Նահանգներու տնտեսական եւ ռազմական օժանդակութիւնը նուազեցաւ 500 միլիոն տոլարէն 200 միլիոն տոլարի, նոյն տարիներուն թուրքիա ներածեց 3,1 միլիոն տոլար արժող ամերիկեան զինուորական մարքեր: Եւ այդ գումարը կը ներկայացնէր 63,85 տոկոսը թուրքիոյ ռազմական ապրանքներու ներածումին՝ 1990-1995 տարիներուն ընդհանուր գումարին (3,86 միլիոն տոլար), ինչ որ բարձրագոյնն էր եւրոպական երկիրներու ռազմական ներածումներու գումարին:

Ինչպէս առևտրական կապերը, նոյնպէս Միացեալ Նահանգներ - Թուրքիա ռազմական համակարգի յարաբերութիւնները, երկկողմանի եւ ՕԹԱՆԻ միջոցներով, սերտ կը մնան: Թուրքիա տակաւին մասնակից է Միացեալ Նահանգներու ռազմական տարբեր մարզերուն՝ օրինակ՝ «Ֆորթէյն Միլիթըրի Սէյլըս» (FMS), «Ճորճ Մարշըլ Սենթըր ֆոր Սեքիւրիթի Սթալիզ», «Իճբըրքէշըքը Միլիթըրի Ետիւքէշըք Էնտ Թրէյ-Գիլ» (IMET): Մ. Նահանգներու պաշտպանութեան իշխանութեան իրաւասութեան պատկանող IMETը օտար երկիրներու բանակի բարձրագոյն խաւերու ռազմական եւ քաղաքական ասպարէզներու պատրաստութեան հաստատութիւններէն մէկն է, ուր մարզուած են Հարաւային եւ Կեդրոնական Ամերիկայի, Աֆրիկայի, Միջին Արեւելքի, ասիական եւ եւրոպական երկիրներու բանակի ղեկավարներէն շա-

ՑՈՒՑԱԿ 4

ԹՐԳԱԿԱՆ ԼՈՊԻԻ ԾԱԽՍԵՐԵՆ ՕՐԻՆԱԿ, 2000

ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ	ԳՈՒՄԱՐ
APCO Worldwide	75,000
Jones, Walker, Wacchar, Poitevent, Carrere & Denegre	112,500
Livingston Group	1,350,000
Solarz Associates	300,000
Solomon Group	525,000

Աղբիւր՝ DoJ/FARA

նելու զայն՝ թափ տալով թրքական լուսինի եւ քաղաքական քարոզչութեան Ուաշինկթընի մէջ եւ ընդհանուր երկրի տարածքին: Թերթը աւելցուց, թէ Միացեալ Նահանգներուն մէջ կայ թուրք նոր սերունդ մը, որ կրնայ ապագային մեծ դեր ունենալ ի նպաստ թրքական լուսինի: Այս նոր սերունդը ա'լ աւելի լաւ պատրաստուած է հերքելու ներկայ քաղաքական խոչընդոտները թուրք քաղաքականութեան առնչութեամբ, մանաւանդ որ յետ Պաղ Պատերազմի միջազգային տնտեսական եւ քաղաքական տուեալներով, ազգային շահերը կը պարտադրեն որդեգրել նորանոր գործելակերպի միջոցներ՝ շահելու Միացեալ Նահանգներու գործադիր եւ օրէնսդիր իշխանութիւններուն աշխատութիւնը, ինչպէս նաեւ հանրային նպաստաւոր կարծիքը թուրքիոյ հանդէպ:

Մ. Նահանգներու հանդէպ թուրքիոյ վարած քաղաքականութեան եւ Մ. Նահանգներ - Թուրքիա յարաբերութիւններու հետապնդած արդիւնքները Հայկական Հարցին առնչութեամբ քաջ ծանօթ են ընթերցողներուն:

ՀԱՄԲԻԿ ԱՍՈՒՆԵԱՆԻ ՀԱՍՅԵՆ

HAMPIG SASSOUNIAN

CSP - L.A.C. B - 5 - 131 44750

60-TH ST. WEST LANCASTER, CA, 93536 — USA

ԳՈՎՏ. ՍԻՄՈՆ ՓԱՅՍՆԵԱՆ


(Շար. 2 եւ վերջ)

ՀԱՅԿԱԿԱՆ ՓԱՂՈՒԹՆԵՐ

ԹԱՐՐԱՌՈՒՍՏԻ ԵՒ ՓԱԿԱՆ ԹԱԳԱՒՈՐՆԵՐՈՒՆ ԺԱՍԱՆԱԿԱԾՐԱՆԻՆ ՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԱԶԳԵՑԻԿ ԴԵՄՔԵՐ ՈՒ ՆԱԻԱՊԵՏՆԵՐ - ՀԱՅԵՐԸ ՄԱՄՆԱԿԻՑ՝ ՄԻԱՆՄԱՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ

Թարրաուստի եւ Փական թագաւորներուն օրով Միանմարի Հայ Համայնքները հեղինակաւոր դէմքեր տուին արքունիքին եւ պետութեան, իսկ Հայ առեւտրականներ ու նաւապետներ աշխտագուցին իրենց գործունէութիւնը: Այս ժամանակաշրջանին հրդեհին գոհ գացած Մուլմէյնի Հայ Համայնքը անշքացաւ, Ռանկունի Հայոց եկեղեցին ու բնակարաններուն մէկ մասը եւս հրդեհէն այրեցան, որմէ ետք եկեղեցին վերակառուցուեցաւ: Իսկ անգլեւպուրման երկրորդ պատերազմին Հայեր կրկին անգամ իրենց մասնակցութիւնը բերին երկրին պաշտպանութեան. անգլիական բանակին կողմէ Փեկուի գրաւումէն ետք շրջանին Հայերը Հալածանքի ենթարկուեցան եւ ցրուեցան:


ԹԱՐՐԱՌՈՒՍՏԻ ԹԱԳԱՒՈՐԻ ԺԱՍՆԱԿԱԾՐԱՆԻՆ
Պակիտաու թագաւոր Հոգեկան անհաւասարակութեան պատճառով 1837ին Հրաժարեցաւ գահէն եւ անոր յաջորդեց եղբայրը՝ Թարրաուստի:
Գահ բարձրանալէն անմիջապէս ետք Թար-



Իրրաուստի գետի ափին գտնուող պատմական Փական քաղաքի տաճարները

րաուստի անվաւեր Հուսիկեց բրիտանացիներուն հետ իր եղբոր կնքած Հաչտութեան դաշինքը, որուն հիմամբ ան Արաքսը եւ Թեւաւսերիմը բրիտանացիներուն զիջած էր: Թարրաուստի այնուհետեւ Հնդկաստանի անգլիական իշխանութեան դիմեց ուղղակի բրիտանական գահին հետ կապուելու համար: Ամարափուրայի մէջ բրիտանացի ներկայացուցիչին պարտադրուեցաւ հետանալ 1837 Յունիսին, եւ Թարրաուստի 1839ին անոր յաջորդին դիմեց, որովհետեւ պէտք եղած ներկայացուցչութիւնը չունէր Հնդկաստանի գինուորական կառավարիչին մօտ: Բրիտանացիք 1840ին առկախեցին իրենց ներկայացուցչութիւնը, եւ Միանմարի ու Բրիտանիոյ միջեւ դիւանագիտական յարաբերութիւնները խզուեցան:

Այս ժամանակ Միանմարի արքունիքին մէջ



Պուրման ցեղի բնակավայր

Հայ ամէնէն ազդեցիկ դէմքը դարձաւ Մկրտիչ Յովսէփ Միանմարի. ան թագաւորին քիմիագիտութեան ուսուցիչը դարձաւ եւ Փեկուի նահանգին կառավարիչի պաշտօնը ստանձնեց: Միանմարի աշխատեցաւ երկրին պահպանելու զրամները արծաթի փոխելու: Ան թագաւորին ամէնէն սիրելի մերձակորներէն էր եւ իշխան Սարգիս Մանուկեանէն ետք երկրին երկրորդ ամէնէն հեղինակաւոր Հայը կը նկատուէր:
Նոյն ժամանակ Յովսէփեան անունով Հայ մը Պասսին քաղաքին մաքսապետը դարձաւ. ան կաթողիկէներուն նուիրեց ընդարձակ եւ գեղեցիկ տարածութիւն մը, որուն վրայ անոնք 1840ին եկեղեցի կառուցեցին:

Թարրաուստի 1841ին Եանկուն մեկնեցաւ Շուէ Տակոնի տաճարին ուխտագնացութեան, եւ իրեն հետ գինուորական մեծ ուժ տարաւ: Բրիտանացիք այս քայլը պատերազմի պատրաստութիւն նկատեցին: Թարրաուստի այնուհետեւ մտային Հաւասարակշիւութիւնը կորսնցուց եւ գահազուրկ հռչակուեցաւ ու նոյն տարին ալ՝ 1846 Հոկտեմբերին մահացաւ:

ՓԱԿԱՆ ԹԱԳԱՒՈՐԻ ԳԱՀԱԿԱՆՈՒԹԵՆԸ ԵՏՔ

Թարրաուստի թագաւորին յաջորդեց զաւակը՝ Փական: Հագու գահ բարձրացած, Հնդկաստանի բրիտանացի կառավարիչը՝ լորտ Տալուսի յարձակողական քաղաքականութեան ձեռնարկեց անոր դէմ եւ տեւական նեղութիւններով աշխատեցաւ իր ազդեցութիւնը տարածել Միանմարի վրայ:
Քաղաքական այս իրաւիճակին մէջ Հայ առեւտրականներ ու նաւավարներ անարգել կը շարունակէին իրենց գործունէութիւնը թէ՛ Միանմարի տարածքին եւ թէ՛ Մայրաքոյն Արեւելքի ու Հարաւարեւելեան Ասիոյ երկիրներուն ու կղզիներուն մէջ: Այս ժամանակ Եանկունի մէջ նշանաւոր առեւտրականներ էին Եսայի Մանուկեան, Գարրիէլ Եղիայեան, Յովհաննէս Ստեփանոսեան եւ Փարգար Դաւթեան, իսկ Շաֆրազեան ընտանիքը առեւտրական գործունէութեան կողքին յանձնակատարի եւ նաւային բեռներու յանձնաձեւմի իրաւունք ունէր: Շաֆրազեանները նաեւ սեփական պանդոկ ունէին Եանկունի մէջ, որուն փողոցը այնուհետեւ կոչուեցաւ Շաֆրազ Ռոտ: Նշենք, որ Եանկուն այս ժամանակ աւելի ծանօթ դարձաւ Ռանկուն անունով, եւ այդպէս ալ մնաց, մինչեւ որ Ի. դարու վերջաւորութեան վերակոչուեցաւ Եանկուն:

Մուլմէյն նաւահանստային քաղաքին մէջ այս ժամանակ կը բնակէին քանի մը Հայ ընտանիքներ, որոնք նաւային առեւտրական գործերով եւ նաւաշինութեամբ կը զբաղէին: Հոնկէ Հայ նաւատէրեր յատուկ հանդիսութիւններով իրենց նորակառոյց նաւերը ծով կ'իջեցնէին:

Մուլմէյնի ամէնէն նշանաւոր Հայ առեւտրականներն էին՝ Միանաս Աւետեան եւ Յովհաննէս Յորդանանեան: Նշենք, որ Յորդանանեանները ջուղայեցի մեծ գերդաստան են, որոնցմէ ընտանիքներ ծաւայի եւ Մայրաքոյն Արեւելքի տարբեր քաղաքներու ու կղզիներու մէջ գործունէութիւն ունէին:

1849ին հրդեհ մը հրոյ ճարակ դարձուց Մուլմէյնի կարգ մը թաղամասերը. մեծապէս տուժեցին նաեւ Հայերը: Աղէտէն ետք գրեթէ բոլոր Հայերը հեռացան հոնկէ եւ տարբեր քաղաքներու մէջ բնակութիւն հաստատեցին: Իսկ Միանաս Աւետեան, որ հոն մնացած էր, մահացաւ յաջորդ տարին՝ 1850ին, Հակոբյան Հարստութեան ձգելով, բայց առանց օրինաւոր ժողովրդի ու կտակի:

Նոյն տարին՝ 1850ին Ռանկունի մէջ մահացաւ պետութեան ամէնէն հեղինակաւոր դէմքերէն իշխան Սարգիս Մանուկեան եւ անոր յաջորդեց անդրանիկ զաւակը՝ Գրիգոր Մանուկեան, որ նոյնպէս բարձրագոյն ազնուականի՝ իշխանի տիտղոս ստացաւ եւ արքունիքին կողմէ արքունական մեծ նաւուն հրամանատար ան վերակացու նշանակուեցաւ: Ան եւս չօրը նման Հաւատարմութեամբ ծառայեց երկրին ու արքունիքին:

ՌԱՆԿՈՒՆԻ ՀՐԴԵԼԸ. ՎԵՐԱԿԱՌՈՒՅՈՒՄ Ս. ԱՍՏՈՒԱՇԱՇԻՆ ԵՎԵՂԵՑՈՅ

Ռանկունի մէջ 28 Դեկտեմբեր 1850ին մեծ հրդեհ մը ծագեցաւ, որուն պատճառով մեծ մասամբ փայտաշէն քաղաքին մէկ մասը հրոյ ճարակ դարձաւ. մեծ վնասներու ենթարկուեցան նաեւ Հայերը, որոնցմէ շատերու բնակարանները, ինչպէս նաեւ Ս. Աստուածածին եկեղեցին եւ երիցատունը այրեցան:
Աղէտէն ետք, երբ այլեւս Ռանկունի Հայ մայրը ի վիճակի չէր քահանայ պահելու,

ազատ կացուցեց զայն կալկաթ երթալու, ուր ան Ս. Նազարէթ եկեղեցւոյ մէջ բնակութիւն հաստատեց:

1851ին Ռանկունի Հայերը կալկաթայի եկեղեցական վարչութեան դիմեցին, որպէսզի օգնեն իրենց նոր եկեղեցի կառուցելու եւ եկեղեցական սպասներ ունենալու: Այս առիթով կալկաթայի Հայոց եկեղեցական թաղէնու Աւետուրեան 15 Մարտ 1851ին յայտարարութեամբ մը կոչ ուղղեց կալկաթայի Հայութեան՝ օժանդակութեան ձեռք երկարելու Ռանկունի Հայութեան:

Կոչին ընդառաջելով՝ Հնդկահայեր նուիրատուութեան եւ Հանգանակութեան ձեռնարկեցին եւ զրկեցին Ռանկունի. Հաւաքուած գումարով Ռանկունի Հայերը ձեռնարկեցին եկեղեցւոյ վերակառուցման, զոր աւարտեցին մէկ տարիէն:

Մինչ այդ, առանց քահանայի մնացած Ռանկունի Համայնքին հոգեւոր ծառայութիւնը ստանձնեց Գարրիէլ սարկաւազ Նազարէթեան՝ եկեղեցական արարողութիւն, թաղում ու պատկառութիւն կատարելով: Այս պատճառով խոռվութիւն ծագեցաւ ժողովուրդին մէջ եւ շատեր անվաւեր նկատեցին անոր խորհուրդները, որովհետեւ Հայ եկեղեցւոյ աւանդական կանոնադրութեան համաձայն, սարկաւազը խորհրդակատարութեան իրաւունք չունի:

ԱՆԳԼԵՒՊՈՒՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏԵՐԱՉՄԸ ԵՒ ՀԱՅԵՐՈՒՆ ՄԱՍՆԱԿՅՈՒԹԻՒՆԸ

Փական թագաւորին կողմէ Ռանկունի կառավարիչ նշանակուած Մոնկ Օք 1851ին բրիտանական առեւտրական երկու նաւերու նաւապետներուն մահուան սպառնալիքով ստիպեց Հարիւրաւոր ուժի տուրք վճարել եւ յետոյ միայն կալկաթ վերադառնալ: Այս դէպքին վրայ լորտ Տալուսի պատուիրակութիւն մը զրկեց Փական թագաւորին՝ նամակով մը, ուր ան կը պահանջէր 920 սթերլին Հատուցում եւ պաշտօնէ արձակել Մոնկ Օքը: Փական պատրաստակամութիւն յայտնեց ընդառաջելու, բայց այս անգամ պատուիրակութիւնը նոր պահանջներ ներկայացուց:

Նոյն օրերուն լորտ Տալուսի ծովակալ Լամպլիթը Ռանկունի զրկեց, որպէսզի բրիտանացի առեւտրականներուն համար առանձնահարկումներ ձեռք ձգէ: Լամպլիթ Փական թագաւորին պատկանող նաւով մը ճամբայ ելաւ, բայց մինչ այդ, 6 Յունուար 1852ին բրիտանացիք պահարեցին Ռանկունի նաւահանգիստը, իսկ երբ օր ետք մարտանաւեր սկսան մտնակոծել քաղաքը:

Փական 7 Փետրուարին (1852) նամակ գրեց Տալուսիին՝ տեղեակ պահելով զայն Ռանկունի ուղիով մտնելու մասին եւ յոյս յայտնելով, որ անգլիացիք առաջը կ'առնեն նոր արինահանգի կառավարութիւնը պատրաստակամութիւն յայտնած էր Հատուցել երկու նաւապետներուն համար: 13 Փետրուարին Տալուսի սպառնալիք մը զրկեց թագաւորին՝ Հարիւր Հազար սթերլինի համարժէք վնասուց Հատուցում պահանջելով: Փական չպատասխանեց սպառնալիքին, որուն պայմանաժամ աւարտեցաւ 1 Ապրիլին, եւ քանի մը օր ետք բրիտանական զօրքեր մտան Միանմարի տարածքներ. պատերազմը սկսաւ:

Բրիտանական ներխուժող ուժերը կատարի կուներէ ետք գրաւեցին Ռանկունը եւ Յունիսին ամբողջացուցին վարին Պուրմայի նաւահանգիստներուն գրաւումը, որմէ ետք շարժեցան դէպի Հիւսիս՝ մայրաքաղաք Ամարափուրայի ուղղութեամբ: Դանդաղօրէն յառաջանալով՝ բրիտանական - Հնդկական բանակը մտաւ Միանմարի խիտ անտառները եւ Դեկտեմբերին Հասաւ Փեկուի շրջակայքը:

Երկրին պաշտպանութեան այս պատերազմին իրենց գործօն մասնակցութիւնը բերին Հայերը. պուրման բանակին եւ իշխանութեան հետ Հայերուն գործակցութիւնը այնքան բացայայտ էր, որ անգլիացիք Հայերուն հետ սկսան վարուել իբրեւ թշնամիներ: Մասնաւոր կուրիներուն գլխաւոր թատերաբեմ Հայ Համայնքը իր անսակարկ մասնակցութիւնը բերաւ պատերազմին:

Փեկուի շրջակայ խիտ անտառները մտնելով՝ բրիտանական - Հնդկական բանակը ծանր կորուստներու գնով շարունակեց յառաջխաղացքը: Բրիտանացիներուն նպատակն էր Փեկուն գրաւելով՝ Հակակշիռի տակ պահել նուաճ-



Պուտոայական տաճարներ

ւած ծովափնեայ գօտին եւ կալկաթայն Միանկափուր երկարող ծովային գիծը ապահով դարձնել: Բրիտանացիք հետաքրքրուած էին նաեւ Չինաստանի հետ առեւտրական աւանդական ուղիներով, ինչպէս նաեւ՝ Հիւսիսային Միանմարի Հնդկական կաղնիի իւրով եւ թանկագին քարերով, յատկապէս՝ սուտակով:

1852 Դեկտեմբերին մինչեւ 1853 Յունուար - Փետրուար Փեկուի մէջ արիւնահեղ գօտեմարտեր մղուեցան, մինչեւ որ բրիտանացիք նուաճեցին դիմադրողները եւ գրաւեցին քաղաքը ու անոր շրջակայքը:

Փեկուի գրաւումէն ետք բրիտանացիք գաժան Հաչուեղաղար սկսան տեսնել դիմադրութեան մասնակցներուն հետ. սաստիկ նեղութիւններու եւ Հայածանքի ենթարկուեցան նաեւ Հայերը: Քաղաքանօթ՝ Հայերուն ներկայացուցած տնտեսական ու քաղաքական ազդեցիկ ուժին եւ առեւտրական կապերուն, առիթը յարմար նկատելով՝ բրիտանացիք աշխատեցան չէզոքացնել զանոնք, որպէսզի հետագային մրցակիցներ չունենային իրենց դէմ: Փեկուի Հայ Համայնքը այսպէսով չէզոքացուեցաւ եւ այս ժամանակներէն ետք անշքացաւ:

Բրիտանացիք երբ ամբողջացուցին վարին Պուրմայի գրաւումը, Փական թագաւոր 18 Փետրուար 1853ին դիմեց եղբոր՝ Միանունի, անոր յանձնեց գահը եւ թելադրեց բանակցել բրիտանացիներուն հետ:

Բրիտանացիք թէեւ մեծ դժուարութեան մատնուած էին լեռնային ու անտառային դժուարամատչելի շրջաններուն մէջ կուր մղելով, սակայն ողբեցին շարժի աւելի Հիւսիս: Հակառակ նոր թագաւորին՝ Միանունի կողմէ խաղաղութեան հաստատման պատրաստակամութեան, կուներէր սաստկացան: Պուրման բանակը վերագրեց Հնդկական կաղնիի կարգ մը Հարուստ անտառներ եւ բրիտանացի մարտնակաւորները ի վերջոյ, հետագայ աւելի մեծ պատերազմի մը առաջը առնելու համար կողմերուն միջեւ համաձայնութիւն եւ Հաչուեղաղար գոյացան: Բրիտանացիք առանձնաշնորհումներ ստացան նաեւ չգրաւուած շրջաններուն մէջ:

Փական թագաւոր, որ իշխանութեան հեռացած էր, բնակութիւն հաստատեց Մանտալայի մէջ, ուր մահացաւ 1880ին:

ԱՊՊԵՏ ՄԱՆՃԻԿԵԱՆ

«ԱԶԳԱԿ»Ի ՄԵՉ ԾԱՆՈՒՅՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազգակ»ի մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժնում գրեցնեն հրատարակման թուականէն առնուած օր մը առաջ, Միւշեւի ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄԱՐ 5:00:
ՄԱՀԱՉԳՆԵՐԸ բացառութիւնն է: Մահազգ կ'ընդունուի միայն ուշ գիշեր, այնքան ատեն որ զայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:

BALTAYAN ELECTRIC




TUNGSRAM for a brighter world

80%

ԵԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՆՈՒԱԶ ՍՊԱՌՈՒՄ

ՍՈՎՈՐԱԿԱՆ ԼԱՄՔԵՐ 10 ԱՆՉԱՍ ԱՒԵԼԻ ԴԻՍԱՅՈՂ



ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԵՒ ԵՐԱՄԱՐՍԵՒ ԼԱՄՔ

Ա. մասնահիղ Դուրե Զամուտ, Արմենիա պողոտայ, հեռ. 262901 Բ. մասնահիղ Տորա, հեռ. 261800 259600

Advertisement for G. AYANIAN & SONS featuring various lighting fixtures and the slogan 'La lumière en privilège'.

Advertisement for video equipment: ՏԱՐԵՂԱՐՁԻ ԼԱԲԱԳՈՅՆ ՆՈՒԷՐՈ ՎԻԵՕԻ ԿԱՍ ՇՈՒ ՎՐԱՅ ՎԻԵՕ ՎԻՃԵՐ

Advertisement for a car: ԿՈՒՉՈՒԻ Կարգետ ոսկերիչ (սեռեքեր) մը, հեռ. 03-882947:

Table with exchange rates and prices for various goods, including gold, silver, and electronics.

Advertisement for Haigazian University Faculty of Business Administration & Economics, including contact information and program details.

ՆՈՒՆԻ ԿՐԱԿԱՆ ԱՍՏՂԵՐԸ

Series of short news items and announcements, including dates and locations for various events.

ՕՐԱՏԵՏՐ



Large program schedule for Panasonic and other electronics, listing times and product names.

ԽԱՉԲԱՌ ԹԻՒ 5126

Table with 10 columns and 10 rows, likely a lottery or drawing schedule, with columns for numbers and dates.

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն

ԱՇԽԱՐՀ



Վ. Մ. Ը. Մ. - ԼԵՎԱՍ

ՊԱՍՔԵԹՊՈԼԻ ՄՐՑՈՒՄՆԵՐՈՒՆ ՅԱՅՏԱԳԻՐԸ

Շարափավերջին, Լ. եւ Ս. Յակոբեան քուէճի դաշտին վրայ տեղի կ'ունենան Հ. Մ. Ը. Մ. Վ. Մ. Ի ԼԵՎԱՍ յանձնախումբին կողմէ կազմակերպուած պասքեթ-պոլի մրցումները, ստորեւ տրուած յայտագրին հիմամբ:

Շարափ օրուան մրցումները տեղի կ'ունենան կէսօրուան ժամը 12:00էն սկսեալ, իսկ Կիրակի օրուան մրցումները՝ կէսօրէ առաջ ժամը 11:00էն սկսեալ:

Ստորեւ՝ մրցումներուն յայտագիրը:

ՇԱՐԱՓ, 20 ԱՊՐԻԼ	ԺԱՄ
Ս. Խանամիրեան - Մետրոպեան (միջակ աղջիկներ)	12:00ից
Դպրեվանք - Գ. Հարպոյեան (Ս. Խաչ) (միջակ տղաք)	1:00ից
Լ. եւ Ս. Յակոբեան - Դպրեվանք (մեծ տղաք)	2:00ից
Թորոսեան - Լ. եւ Ս. Յակոբեան (միջակ տղաք)	3:00ից
Կ. Բ. Վ. - Նուպարեան - Խրիմեան (մեծ տղաք)	4:00ից
Հայ Աւետ. քուէճ (Այնճար) - Զաղաքի Հայ Աւետ. քուէճ (մեծ տղաք)	5:00ից
Ճեմարան - Ծամլեան-Թաթևկեան (մեծ աղջիկներ)	6:00ից
Ս. Հռիփսիմեան - Ծամլեան-Թաթևկեան (մեծ տղաք)	7:00ից

ԿԻՐԱԿԻ, 21 ԱՊՐԻԼ	ԺԱՄ
Ս. Զառասնից Մանկանց - Լ. եւ Ս. Յակոբեան (միջակ տղաք)	11:00ից
Ս. Խանամիրեան - Գ. Կիւլպէնկեան (Յառաջ) (միջակ տղաք)	12:00ից
Գ. Կիւլպէնկեան (Յառաջ) - Մետրոպեան (մեծ աղջիկներ)	1:00ից
Ս. Հռիփսիմեան - Ս. Խանամիրեան (միջակ աղջիկներ)	2:00ից
Նուպարեան-Խրիմեան - Մետրոպեան (միջակ աղջիկներ)	3:00ից
Ս. Հռիփսիմեան - Ճեմարան (մեծ տղաք)	4:00ից
Մենրիպեան - Ծամլեան-Թաթևկեան (մեծ տղաք)	5:00ից
Կ. Բ. Վ. - Դպրեվանք (մեծ տղաք)	6:00ից
Լ. եւ Ս. Յակոբեան - Զաղաքի Հայ Աւետ. քուէճ (մեծ տղաք)	7:00ից

ԷՆ. ՊԻ. ԷՅ.

ՑԱՐԴ 14 ԽՈՒՄԲԵՐ ԱՊԱՀՈՎԱԾ ԵՆ ՓԼԷՅՑՖԻ

ՄՐՑՈՒՄՆԵՐՈՒՆ ԻՐԵՆՑ ՏՈՍԱԸ

Էն. Պի. Էյ. ի երկուսն մրցումներուն, որոնք միայն երեք ճակատումներ էին, Շիքակո Պուլի եւ Պոսթրն Սելիթրա յաղթանակներ արձանագրեցին իրենց մրցակիցներուն դաշտերուն վրայ, մինչ Լոս Անճելոս Լէյքըրսը իր դաշտին վրայ պարտութեան մատնեց իր հիւրը՝ Սիեթլ Սուփըրսոնիքսը, 111 - 104 արդիւնքով: Այսպիսով, Լէյքըրսը իր դաշտին վրայ արձանագրեց յաջորդական 14րդ յաղթանակը, զոր նախապէս չէր յաջողած իրագործել:

Յաղթական կազմին մարզիկներէն՝ Շաքիլ Օնիլ նշանակեց 41 կէտ եւ 11 ռիպաւունտ, իսկ անոր խմբակից Քոպէ Պրայընը՝ 19 կէտ: Սուփըրսոնիքսի ամենէն աւելի շատ կէտերը նշանակեց Կերի Փէյթընը (20 կէտ եւ 8 հիւսթ):

Ֆիլատելֆիոյ մէջ Սիքսըրսը 98 - 96 արդիւնքով պարտութիւն մը կրեց իր հիւրէն՝ Շիքակո Պուլպէն, որ իր այս յաղթանակը կերտեց շնորհիւ Ճէյլոն Ռոպի, որ աւարտէն 2 երկվայրկեան առաջ նշանակեց երկու կէտ, մինչ մրցումին արդիւնքն էր 96 - 96: Մրցումին աւարտին ան ընդամենը նշանակեց 32 կէտ:

Երրորդ եւ վերջին մրցումին, Մինեսոթա Վուլվզ իր դաշտին վրայ 93 - 90 արդիւնքով պարտութիւն մը կրեց Պոսթրն Սելիթրեան: Յաղթական կազմին մարզիկներէն՝ Փոլ Փիրս նշանակեց 31 կէտ:

Ստորեւ՝ փլէյօֆի մրցումներուն իրենց տուսը ապահովող խումբերը:
ԱՐԵՒԵԼԵԱՆ ՇՐՁԱՆ (Ատլանտեան գօտի)
Նիւ Ջըրսի Նէթս
Պոսթրն Սելիթրա
Օրլանտո Մեյֆլը
Ֆիլատելֆիա Սիքսըրս (Կեղոնական գօտի)
Տիքսոն Փիքսըրս
Շարլոթ Հոնէթս
ԱՐԵՒՄՏԵԱՆ ՇՐՁԱՆ (Միջարեւմտեան գօտի)
Տայաս Մավըրիքս
Սան Անթոնիո Սփըրս
Մինեսոթա Վուլվզ
Ետլա Ճէյ (Խաղաղական գօտի)
Մաքրամենթո Քինկ
Լոս Անճելոս Լէյքըրս
Փորթլենտ Թրէյլ Պլէյզըրս
Սիեթլ Սուփըրսոնիքս

2002Ի ՄՈՆՏԻՍԱԼԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ ԾԻՐԵՆ ՆԵՐՄ՝

ԱՅՍՕՐ՝ ՖՈՒԹՊՈԼԻ ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ 25 ՄՐՑՈՒՄՆԵՐ

2002ի Մոնտիալի ապրանշանէն ետք շաքաթ առաջ, ձափոնի եւ Հարաւային Քորեայի իրենց տուսը ապահոված 32 խումբերէն 29ը, այսօր վրայած պիտի ըլլան ֆութպոլի միջապային բարեկամական մրցումներ կատարելով, գրեթէ վերջնականապէս յատկացնելու համար իրենց մարզիկներուն անուանացանկը: Միայն երեք խումբեր՝ Զինաստան, Մեուտական Արաբիա եւ Սենեկալ, բարեկամական մրցումներ պիտի չկատարեն այսօր:

Հիմնական մարզիկներուն բացակայութիւնը, որոնց կարգին, արժանիքին երկուսն արժանիքի Պարթիա Պարթիա Պարթիա եւ Խուան Սեպասթիան վերոնի, իտալացիներ՝ Փաուլո Մարտինի, Ֆրանչեսկո Թոթի եւ Բրիսթիան Կիլի, եւ անգլիացիներ՝ Տէյվիտ Պեքհամի եւ Սոլ Բեմպըլի բացակայութիւնը անոր պիտի տայ նորէն մարզիկներու, որպէսզի նկատի առնուին իրենց մարզիկներուն կողմէ:

Արժանիքին, որ Եթովպիայի մէջ պիտի մրցի Գերմանիոյ դէմ, դաշտ պիտի ներկայանայ նաեւ առանց՝ Ռոպերթ Սլայալի եւ Հենրիկ Բրեստի: Մարպիչ Մարսելո Պիլոյա Պարթիա Պարթիայի փոխարէն նկատի առած է Պարսէլոնայի 20 տարեկան յա-

րէ, նախքան Մոնտիալի մասնակցող իր մարզիկներուն անունը յայտարարելը, Փարակուէյի դէմ տեղի ունենալիք մրցումին, Անգլիոյ իմբապետ նշանակեց Մայքըլ Օուրընը, նկատի ունենալով, որ Տէյվիտ Պեքհամ վիրաւոր է: Բացակայ մարզիկներէն օգտուողները, իրենց ամէն կարելին պիտի ընեն տպաւորելու համար Էրիքսընը, որ իր վերջնական 23 մարզիկներուն անունները պիտի յայտարարէ շատ հաւանաբար յառաջիկայ Մայիս 7ին:

Շարքաւորուած մարզիկներուն անունը կը թուէր, որ Տէֆորթիօ Քրոնուայի դէմ տեղի ունեցած մրցումին ընթացքին («Չէմփիթրնի Լիկ») իր ձախ ոտքը կտորած Պեքհամ արդեօք պիտի կարենա՞յ իր մասնակցութիւնը բերել Մոնտիալին:

Մէկ քան յստակ է սակայն, որ Անգլիոյ ֆութպոլի բարձրագոյն դասակարգի ախոյեանու թեան 2001 - 2002 եղանակը վերջ գտած է այլեւս անոր համար, որովհետեւ ան հապի անթոքոստիքով կը քայլէ:

Ըստ բժշկներուն, անոր ապացինման ժամանակը պիտի ըլլայ ութ շաքաթ, ինչ որ կը նշանակէ, թէ ան ճիշդ ժամանակին պիտի վերադառնայ դաշտ եւ Անգլիոյ ֆութպոլի ապ-

գային խումբին հետ պիտի կատարէ Մոնտիալի իր առաջին մրցումը՝ Շուէտի դէմ (Յունիս 2ին):

Ստորեւ՝ այսօրուան ֆութպոլի բարեկամական մրցումներուն յայտագիրը:

Անգլիա - Փարակուէյ
Ֆրանսա - Ռուսիա
Գերմանիա - Արժանիքին
Յունաստան - Չեխիա
Հունգարիա - Պիլոնուսիա
Ալիւր - Մ. Նահանգներ
Ձափոն - Քոսթա Ռիքա
Լուքսամպուրկ - Լիխթենշթայն
Մայթա - Ալբանիան
Հիւսիսային Իրան - Սպանիա
Սորվեկիա - Շուէտ
Փորթուգալ - Պրաչի
Սլովակիա - Նիկերիա
Սլովենիա - Թունիս
Հար. Ափրիկէ - Էթովպիա
Լեւազորիա - Պոնիսիա
Իտալիա - Ռուսիոյ
Մեքսիքա - Պուկարիա
Լեւազորիա - Ռումինիա
Բուրքինա - Վրաստան
Ետիոպիա - Լիբանան
Աւստրիա - Քամբոջիա
Պելճիքա - Սլովակիա
Գանիա - Իսրայէլ

Հ. Յ. Դ. ԽՄԲԱԿՑՈՒԹԻՒՆԸ ...

Շարունակուած Ա. ԷջԸ

մէջ փոքրամասնութիւններու՝ ներառեալ չըջանի Հայ ընկալութեան, հանգէպ ստեղծուած լարուածութեան առնչութեամբ: Դեպքանը, իր կարգին, ներկայացուց կացութիւնը չըջանցելու քանի մը առաջարկներ:

Հ. Յ. Դ. ԽՄԲԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԿԵ ՊԱՇՏԱՆԸ

Հայաստանի խորհրդարանի երկկուսան հիստի ընթացքին Հ. Յ. Դ. խմբակցութեան անդամ, Ազգային ժողովի արտաքին յարաբերութիւններու յանձնաժողովի փոխ նախագահ Արմէն Ռուստամեան մտահոգութիւն յայտնեց Ռուսիոյ Կրասնոտար մարզի Հայ ընկալութեան նկատմամբ տեղական իշխանութեան կողմէ իրականացուող լայնածաւալ միջոցառումներուն վերաբերեալ: «Հ. Յ. Դ. խմբակցութիւնը կ'առաջարկէ ձեւաւորել պատգամաւորական պատուիրակութիւն, որ նախընտրելի է, որ Ռուսիոյ Պետական Տուժալի պատգամաւորներու հետ այցելել Կրասնոտարի մարզ, ծանօթանայ առկայ խնդիրներուն, փորձ լուծել զանոնք՝ կանխելու համար հաւանական անցանկալի զարգացումները», ըսաւ Արմէն Ռուստամեան:

Ռուստամեան տեղեկացուց, որ Հ. Յ. Դ. Գերագոյն Մարմինը այս հարցը ընդարկած է Հայաստանի մէջ Ռուսիոյ դեսպանին հետ: Ռուստամեան յայտնեց, որ Ազգային ժողովի արտաքին յարաբերութիւններու յանձնաժողովը Հ. Յ. Դ. խմբակցութեան մտահոգութիւնը ու առաջարկները փոխանցած է Ռուսիոյ Պետական Տուժալի արտաքին յարաբերութիւններու յանձնաժողովին: Ան նաեւ նշեց, որ երկու երկիրներուն միջեւ մշակուած պայմանագրային-իրաւական դաշտը կ'արտօնէ Կրասնոտարի հայութեան իրաւական հարցերու լուծումը:

ՊՈՒՐԸ ԸԱՍՈՒՏԻ ԱՌԱՋԻՆ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԳՐԱՂԱՐԱՆ ԼԵՒՈՆ ԵՒ ՍՈՖԻԱ ՅԱԿՈՒԲԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՔՈՒԼԵՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑ

Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան Ազգային քուէճի մէջ հաստատուած Պուրճ Ըսմուտի Առաջին Ժողովրդային Գրադարանը 15 Ապրիլ 2002ԸՆ սկսեալ կը գործէ հետեւեալ ժամանակացոյցով. Երկուշաբթից Ուրբաթ օրերը՝ առաւօտեան ժամը 10:00ԸՆ երկուշաբթի ժամը 8:00 Շաքաթ օրերը՝ առաւօտեան ժամը 9:00ԸՆ կէսօրէ ետք ժամը 3:00 Գրադարանէն կրնան օգտուիլ անձ տարիքի եւ զանազան լեզուներով հետաքրքրութեան տէր անձեր:

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

ՓԻՆԿ ՓՈՆԿ. ԼԻԲԱՆԱՆԻ ԽՄԲԱՅԻՆ ԱՒՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

Հ. Մ. Ը. Մ. Ի ՆՈՐԱԿՈՅՆ «ՉՈՒՆԵՐԸ» ԸՆԴՈՒՄ ԵՒ ԺԱՄՏՈՒՐ

Լիբանանի փինկ փոնկի խմբային ախոյեանութեան մրցումներուն, որոնք տեղի կ'ունենան «Միշտ Մըր»-ի անուան համալիրին մէջ (Նահր էլ Մոթ), Հ. Մ. Ը. Մ. ի տղաքը դարձեալ «անխնայ» գտնուեցան իրենց նոր երկու մրցակիցներուն՝ Շանվիլի եւ ժամհուրի նկատմամբ, եւ հանգիստ յաղթանակ մը արձանագրեցին, երկուքն ալ պարտութեան մատնելով 3-0 արդիւնքով, նախորդ մրցումներուն նման:

Հ. Մ. Ը. Մ. ի տղաք այսօրուան մրցակիցն է Մար Եուսէֆ Քրոնիք Շահուան: Մրցումը տեղի կ'ունենայ ժամը 5:30ին:

ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈԼԻ ՖԵՏԵՐԱՍԻՈՆԻ ԺՈՂՈՎ

ՍԱԺԷՍ ՋՈՐՄ ՄԻԼԻՈՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՈՍԿԻ ՏՈՒԳԱՆՔԻ ԵՆՔՐԱՆՎՈՒՅՄԱԻ

Լիբանանի ֆութպոլի ֆետերասիոնը, շաքաթակիցի իր գումարած հերթական ժողովին վաւերացնելէ ետք 21րդ հասցրուանի մրցումներուն արդիւնքները, հրատարակեց այն 27 մարզիկներուն անունները, որոնք այդ հասցրուանին դեղին քարտեր ստացան (տեսնել՝ ստորեւ):

Սովորականին նման դարձեալ շատ էր թիւը մէկական մրցումով կախակայուած մարզիկներուն, որոնք իրենց երրորդ դեղին քարտը ստանալով պիտի բացակային իրենց կազմներուն կատարելիք յաջորդ մրցումներէն: Այդ մարզիկներն են. Ֆայսալ Անթար, Գուրգէն Ենգիպարեան (Թատամոն Սուր), Չիտտ Սամատ (Անսար), Վարդան Չիքիլեան (Հ.Մ.Ը.Մ.), Շաքեր Տիս Կիուս (Սալամ), Անտրէ Սիլվա (Ալիս Ալէյ) եւ Շահէ Գասպարեան (Ռապիկ): Մինչ Թատամոն Սուրի մարզիկ Եուսէֆ Պալապաքի երկու մրցումով կը կախակայուի, իր կոշտ խաղարկութեան պատճառով:

Սաժէս դարձեալ տուգանքի կ'ենթարկուի, այս անգամ չորս միլիոն լիբանանեան ոսկի, որովհետեւ անոր համակիրները, անցեալ շաքաթավերջին Սալամի դէմ տեղի ունեցած մրցումին (Թրիփոլի մէջ), հայոյթած էին իրաւարարին:

Ֆութպոլի ֆետերասիոնը կախակայեց նաեւ լրագրող մը՝ Էլի Նասարը, որ քանի մը առիթներով հայոյթած էր իրաւարարներուն եւ ֆետերասիոնի անդամներուն:

Սաջին հերթին անկէ կը խլուի դաշտ մտնելու արտօնագիրը, տրուած՝ ֆետերասիոնին կողմէ, եւ անոր կ'արգիլուի որեւէ դաշտ մուտք գործել, նոյնիսկ պատուով թրիպին:

Ստորեւ՝ 21րդ հասցրուանի մրցումներուն դեղին քարտ ստացող մարզիկներուն ցանկը. Ֆայսալ Անթար, Գուրգէն Ենգիպարեան (Թատամոն Սուր), Հրէյն Տասպուլ (Շապապ Սահէյ), Ապպա Սալէի, Չիտտ Սամատ (Անսար), Անիէտ Թահա, Անիէտ Քրայէմ, Համլէթ Միլիթարեան (Հ.Մ.Ը.), Հասան Սթանպուլի (Ալի Սալամ), Ռամի Արուս (Պրճ), Վարդան Չիքիլեան, Իպպէթ Սալիլ, Լեւոն Սաչատուրեան, Սարգիս Տոնապետեան, Յարութիւն Կիլիլիլեան (Հ.Մ.Ը.Մ.), Տէտէ Թամպուրա, Ասի Աթթար (Ախո), Շաքեր Տիս Կիուս, Պասսամ Ասատ (Սալամ), Քասեմ Սահմուտ, Միշէլ Ժրպարան (Սաժէս), Անտրէ Սիլվա, Ալի Պատաուի (Ալիս Ալիլ Ալէյ), Շահէ Գասպարեան, Մոհամմէ Մընսարի (Ռապիկ), Ալի Քառնիպ եւ Անիէտ Նասամանի (Սաֆա):

ՀԱՐԻՐԻ ԱՅՍՕՐ...

Շարունակուած Ա. ԷջԸ

նախագահ ձէյմս Ռոլֆինսընի հետ: Վարչապետ Հարիրի. որուն կրնկերակցին ելեմուտքի նախարար Ֆուսա Սիւրորա, տնտեսութեան եւ առեւտրի նախարար Պասէլ Ֆիլիան եւ Կեղորդական Դրամատան կառավարիչ Ռիտտ Սուլամէ, երկէ տեսակցեցաւ Միացեալ Նահանգներու պաշտպանութեան նախարար Տոնրալ Ռամսֆելտի եւ արտաքին գործոց փոխ նախարար Ռիչըրտ Էրմիթսթի հետ: Այս վերջինին հետ հանդիպումէն ետք, Հարիրի ըսաւ, որ նկատած է, թէ Ռաշինկիւրն կը փափաքի, որ Իսրայէլ հետանայ Այսրորդականին: «Նաեւ խօսեցանք Լիբանանի տնտեսական վիճակին ու այս գծով Ռաշինկիւրնի օժանդակելու կարելիութեան մասին», նշեց ան:

Միւս կողմէ, վարչապետ Հարիրի ամերիկեան պատկերասփիռի կայանի մը տրուած հարցապարոյցի մը մէջ յայտնեց, որ նախագահ Ճորճ Պուշի պիտի ըսէ, որ «նեք կարիքը ունիք Միջին Արեւելքի մէջ խաղաղութեան հաստատումին եւ անհրաժեշտ է, որ Միացեալ Նահանգներ միջամտեն ու աւելի մեծ դեր ստանան այս նպատակին հասնելու համար»:

«Կարելի չէ խաղաղութիւն հաստատել Միջին Արեւելքի մէջ առանց անկապ պաշտօնիւնեան պետութիւն տեղեկելու: Իսկ հարցը միայն պիտուրական եւ ապահովական միջոցառումներով լուծելու փորձերը ոչ մէկ տեղ պիտի հասցնեն, ինչպէս որ կը տեսնենք տարիներէ ի վեր», ըսաւ ան. ընդգծելով, որ անհրաժեշտ է հակամարտութեան ամբողջական լուծում:

Պաշտպանութիւն գործած անձնապատասխան գործողութիւններուն մասին հարցումի մը՝ Հարիրի ըսաւ. «Ի՞նչ է տարբերութիւնը Թեհէնի մէջ խաղաղութեան հրաւայերու կոն գաղտը պաշտօնիցի քաղաքայինին եւ Իսրայէլի մէջ անձնապատասխան գործողութեան փոհերուն միջեւ»:

